ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

ԳՄԳՀ-ՀԲՄԽԾՁԲ-25/15 ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՐԱՏԱՊ ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹԻ ՁԵՎՈՎ ԳՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՀԱՅՏԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՆԻՍՏԻ

ք.Գավառ «12» մայիսի 2025թ.

ժամը 16:00

Մասնակցում էին

Հանձնաժողովի գնահատող անդամներ՝ Գ.Բոշյան /նախագահ/,
Ա.Ղուրշուդյան, Ն.Մուխսյան,

Քարտուղար՝ Ս.Մելքոնյան

<u>ԳՄԳՀ-ՀԲՄԽԾՁԲ-25/15 ծածկագրով հրատապ բաց մրցույթի ձևով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի գնահատման մասին</u>

Գ.Բոշյան

1) «Գնումների համակարգող /քարտուղար/ Սյուզաննա Մելքոնյանը հայտարարեց յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած հայտը ըստ չափաբաժինների՝

1.1) «Ռաֆ-Ավո» ՍՊԸ-ն հայտ է ներկայացրել 1-ի և 2-րդ չափաբաժինների մասով,

1.**2)** «Թիվ 28 ՇՄՇ» ԲԲԸ-ն հայտ է ներկայացրել 3-րդ և 4-րդ չափաբաժինների մասով:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

2) Ուսումնասիրելով ԳՄԳՀ-ՀԲՄԽԾՁԲ-25/15 ծածկագրով հրատապ բաց մրցույթի ձևով գնում կատարելու ընթացակարգի մասնակիցների կողմից ներկայացրած հայտերը պարզվեց.

2.1) «Ռաֆ-Ավո» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած հայտը համապատասխանում է հրավերով սահմանված պահանջներին:

2.2) Թիվ 28 ՇՄՇ» ԲԲԸ-ի կողմից ներկայացրած հայտը չի համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին.

- Հրավերի Ի-ին մասի 2.4.1 կետի 1-ին ենթակետի /«Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշ/ պահանջով հիմնական աշխատակազմում մասնագետներ ներգրավելու նպատակով ներկայացված գրավոր համաձայնագրերի ամսաթվերը չեն համապատասխանում էլեկտրոնային թվային ստորագրության ամսաթվին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

3) Բավարար գնահատված մասնակցի կողմից ներկայացվել է հետեյալ գնային առաջարկը.

Չափաբաժին 1

N	Մասնակցի անվանումը	Ծառայության անվանումը	Նախահաշվային արժեք	Արժեք	ԱԱՀ	Ընդհանուր գինը
1	2	3	4	5	6	7
1	**«Ռաֆ-Ավո» ՍՊԸ**	«Նորատուսի թիվ 2 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի ցանկապատի բարեկարգման աշխատանքների նախագծանախահաշվայի ն փաստաթղթերի կազմման խորհրդատվական ծառայությունների ձեռքբերում	800000	757000	-	757000

Չափաբաժին 2

N	Մասնակցի անվանումը	Ծառայության անվանումը	Նախահաշվային արժեք	Արժեք	ԱԱՀ	Ընդհանուր գինը
1	2	3	4	5	6	7
1	**«Ռաֆ-Ավո» ՍՊԸ**	ՀՀ Գեղարքունիքի մարզ, քաղաք Գավառ, Ազատության փողոցում սպորտային հրապարակի (փողոցային ֆուտբոլ և բասկետբոլ) կառուցման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման խորհրդատվական ծառայությունների ձեռքբերում	700000	677000	-	677000

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

4) Հիմք ընդունելով վերը նշվածները, ՀՀ Կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի 526-Ն որոշման 41-րդ կետը և 2025 թվականի ապրիլի 28-ի «ԳՄԳՀ-ՀԲՄԽԾՁԲ-25/15» ծածկագրով հրատապ բաց մրցույթի ձևով հրավերի փաթեթի Ի-ին մասի 8.9 կետի պահանջները, **գնահատող հանձնաժողովը որոշեց՝**

- Գնումների մասին ՀՀ օրենսդրության եւ «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի պահանջներին համաձայն.

ԳՄԳՀ-ՀԲՄԽԾՁԲ-25/11 ծածկագրով հրատապ բաց մրցույթի ձևով գնում կատարելու ընթացակարգի բավարար գնահատված հայտ և նվազագույն գնային առաջարկի հիման վրա **գնահատող հանձնաժողովը որոշեց ընտրված մասնակից ճանաչել՝ «Ռաֆ-Ավո» ՍՊԸ-ին /1-ին և 2-րդ չափաբաժինների մասով/,**

- կասեցնել նիստը 1 (մեկ) աշխատանքային օրով և **«Թիվ 28 ՇՄՇ» ԲԲԸ-ին** առաջարկել մինչև կասեցման ժամկետի ավարտը՝ 14/05/2025թ. ժամը 18:00-ն /աշխատանքային օրվա ավարտ/, շտկել վերը նշված անհամապատասխանությունները և էլեկտրոնային եղանակով Գավառի համայնքապետարանի էլեկտրոնային փոստի միջոցով գնահատող հանձնաժողովին ներկայացնել համապատասխան փաստաթղթերը:

Ընդ որում եթե մասնակցի գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին դիմում-հայտարարությունը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը սույն հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը , ներառյալ այն դեպքերը, երբ սահմանված ժամկետում չի շտկում կամ ամբողջական չի շտկում հայտի գնահատման արդյունքում արձանագրված անհամապատասխանությունները ..... ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում մասնակցի ստանձնված պարտավորության խախտում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

5) Գնահատող հանձնաժողովը որոշեց՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ **1-ին և 2-րդ չափաբաժինների մասով անգործության ժամկետը կիրառելի չէ,** քանի որ գնման ընթացակարգին հայտ է ներկայացրել մեկ մասնակից: Պայմանագիր կնքելու որոշման հայտարարության հրապարակման հաջորդող աշխատանքնային օրը ընտրված մասնակցին ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

6) Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել սույն թվականի մայիսի 15-ին ժամը 12:00-ին՝ ք.Գավառ, Գր.Լուսավորչի 12 երկրորդ հարկ, 8-րդ աշխատասենյակ հասցեում:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ		
ՆԱԽԱԳԱՀ՝		Գ.ԲՈՇՅԱՆ
ԱՆԴԱՄՆԵՐ՝		Ն.ՄՈՒԽՍՅԱՆ
		Ա.ՂՈՒՐՇՈՒԴՅԱՆ
ՔԱՐՏՈՒՂԱՐ՝		Ս.ՄԵԼՔՈՆՅԱՆ